



«ՀԱՅԵՐԸ՝ ԱՌԱՅ ԾԽԱԽՈՏԻ»

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ »	ՀՈՂՎԱԾՆԵՐ	ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ	ԱՆՀԱՏՆԵՐ »	ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌ	ՏՈՆԱՅՈՒՅՑ »	ԱՅԼ »
-----------------	-----------	----------------	------------	-----------------	-------------	-------

14/06/2013 | Հասարակություն | No comments

ԵՊՀ-ում «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրն անվճար կլինի սփյուռքահայ ուսանողների համար



Երևանի պետական համալսարանի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գեղասպանության թանգարան-ինստիտուտի նախաձեռնությամբ կիրականացվի «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիր: Ինչպես «Արմենպրես»-ի հետ զրույցում նշեց ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Միեր Հովհաննիսյանը, ծրագրի շրջանակում կդասավանդեն ոլորտի առաջատար մասնագետները Հայաստանի բոլոր հայագիտական կենտրոններից: «Արտերկրից հրավիրված դասախոսները ևս կներգրավվեն ուսումնական գործընթացում:

Ուսումնառության ուղղությունները կկազմեն Հայոց գեղասպանության պատմագիտական, սոցիոհոգեբանական, միջազգային իրավունքի, միջազգային հարաբերությունների, մշակութաբանության, լեզվագիտական ոլորտների համատեքստում առկա հիմնախնդիրները»,- ասաց Հովհաննիսյանը:

Նրա խոսքով՝ օրեցօր ավելի պահանջված են դառնում գեղասպանության խնդրին տիրապետող բանիմաց մասնագետները, և Հայոց գեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ այս խնդիրն առավել քան կարևոր է դառնում: Մագիստրոսական ծրագիրն անվճար կլինի սփյուռքահայ ուսանողների համար:

«Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագիրը գործելու է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում: Մագիստրատուրայի ընդունելության մեկնարկը տրվել է մայիսից: Ընդունելությանը կարող են մասնակցել ոչ միայն ԵՊՀ-ի, այլ նաև Հայաստանի եւ Արցախի այլ բուհերի հումանիտար հոսքի շրջանավարտները:

armenpress.am